600.0211.13.07.16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

13 հուլիսի 2016 թվականի №211Ա
ք.Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի №470Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2013 թվականի դեկտեմբերի 25-ի №470Ա որոշմամբ «ՏԻԳՄԱՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրվել է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնքի վարչական տարածքում՝ Ազատ գետի վրա, «Ազատ» փոքր հիդրոէլեկտրակայանում (այսուհետ՝ Կայան) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0530 լիցենզիան (այսուհետ՝ Լիցենզիա)՝ մինչև 2031 թվականի հուլիսի 19-ը գործողության ժամկետով, որից կառուցման ժամանակահատվածը՝ մինչև 2016 թվականի հուլիսի 19-ը,

բ) Ընկերությունը 2016 թվականի ապրիլի 13-ին դիմել է Հանձնաժողով՝ հայտնելով, որ տեխնիկական և բնապահպանական փորձաքննություններ անցած նախագծի համաձայն Կայանի կառուցումը նախատեսվում էր Ազատ գետի վրա՝ օգտագործելով 1190-1120մ նիշերի միջև առաջացող էներգետիկ պոտենցիալը, մինչդեռ «Ջրային տնտեսություն ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի և «Հայհիդրոէներգանախագիծ» փակ բաժնետիրական ընկերության միջև 2014 թվականին կնքված պայմանագրի համաձայն, Համաշխարհային բանկի ֆինանսական աջակցությամբ, իրականացվել են Քաղցրաշենի մեխանիկական ռռոզման համակարգից ինքնահոս համակարգին անցնելու նախագծային աշխատանքները: Ծրագիրը իրականացնելու համար Ազատ գետի կիրճում, Ազատի ջրամբարից մոտ 9 կմ դեպի վեր, 1218մ նիշի վրա նախատեսվում է կառուցել ջրընդունիչ կառույց, որից սկիզբ առնող 28

կմ երկարությամբ խողովակաշարի միջոցով ոռոգման համար անհրաժեշտ ջուրը հասցվում է գոյություն ունեցող Քաղցրաշենի պոմպակայանի արտանետման ավազան, և նշված ծրագրի իրականացումը Կայանի կառուցման համար կհանգեցնի բացասական հետևանքների, մասնավորապես՝

- Կայանի գլխամասային հանգույցը, համաձայն նախագծի, տեղակայվելու է Քաղցրաշենի ինքնահոս ոռոգման համակարգի ջրառից ներքև՝ 1190մ նիշի վրա: Կայանի դերիվացիոն խողովակաշարի տեղակայումը դառնում է անհնարին, քանի որ ոռոգման համակարգի խողովակաշարը անցնում է գոյություն ունեցող ճանապարհին զուգահեռ, որի լայնությունը տեխնիկապես թույլ չի տալիս անցկացնել երեք խողովակաշարերը.
- Քաղցրաշենի ինքնահոս ոռոգման համակարգին անհրաժեշտ ջրի քանակությունը (առավելագույնը 0.97մ³/վ), որը նախատեսված է վերցնել Կայանի գլխամասային հանգույցից վերև, բերում է Կայանի տեխնիկատնտեսական ցուցանիշների նվազման:

Ընկերությունը ներկայացրել է նաև Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության 2016 թվականի փետրվարի 23-ի №5/04.1/50628 գրությունը, որի համաձայն, եթե Ընկերությունը և ոռոգումն ապահովող ընկերությունը հանդես գան որպես մրցակցող շահագրգիռ կողմեր, ապա սահմանափակ ջրային ռեսուրսները բաշխվելու են՝ ելնելով ոռոգման ջրապահանջի կարիքների բավարարման առաջնահերթությունից,

գ) Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեն, ի պատասխան Հանձնաժողովի 2016 թվականի ապրիլի 28-ի №ՌՆ/3.2-42/261-16 գրության, հայտնել է, որ Համաշխարհային բանկի կողմից իրականցվող «Ոռոգման համակարգերի արդիականացում» ծրագիրը թևակոխել է շինարարության փուլ,

դ) Ընկերությունը 2016 թվականի հունիսի 6-ի գրությամբ կրկին նշել է Կայանի համար Քաղցրաշենի մեխանիկական ոռոգման համակարգը ինքնահոս համակարգին անցնելու ծրագրի բացասական հետևանքների մասին, ինչպես նաև ներկայացրել է Հայաստանի Հանրապետության Գառնի համայնքի ղեկավարի գրությունը, որի համաձայն «Ոռոգման համակարգերի արդիականացում» ծրագրի շրջանակում կառուցվող ոռոգման համակարգի խողովակաշարը անցնելու է գոյություն ունեցող ճանապարհին զուգահեռ և հաշվի առնելով համայնքի անհամաձայնությունը, ինչպես նաև այն, որ նշված տարածքում առկա է «Երևան Ջուր» փակ բաժնետիրական

ընկերության ջրամատակարարման խողովակաշարը, տեխնիկապես անհնարին է դառնալու Կայանի խողովակաշարի անցկացումը,

ե) Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարությունը, ի պատասխան Հանձնաժողովի 2016 թվականի հունիսի 13-ի №ՇԿ/3.2-44/367-16 գրության, հայտնել է, որ համաձայն Ընկերության №000113 ջրօգտագործման թույլտվության անբաժանելի մաս հանդիսացող լրացուցիչ պայմանների 1-ին կետի «ե» ենթակետի՝ ոռոգման նպատակով հայտի ստացման դեպքում ջրօգտագործման թույլտվությունը ենթակա է վերանայման՝ առաջին հերթին բավարարելով ոռոգման ջրապահանջի կարիքները, ինչն արդեն իսկ կատարվել է, հետո միայն էլեկտրական էներգիայի արտադրության ջրապահանջը,

է) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետը, ի պատասխան Հանձնաժողովի 2016 թվականի հունիսի 13-ի №ՇԿ/3.2-44/368-16 գրության, հայտնել է, որ նպատակահարմար չեն համարում Կայանի կառուցումը՝ հաշվի առնելով բերված փաստարկները, ինչպես նաև Ընկերության և Հայաստանի Հանրապետության Գառնի համայնքի ղեկավարի կողմից ներկայացված պատճառաբանությունները,

ը) Ընկերությունը 2016 թվականի հունիսի 29-ին դիմել է Հանձնաժողով՝ խնդրելով Ընկերության 2016 թվականի ապրիլի 13-ի և հունիսի 6-ի գրություններում նշված հանգամանքները դիտարկել ֆորս մաժոր և իրավիճակից ելնելով՝ դադարեցնել Լիցենզիայի գործողությունը, իսկ Ընկերության կողմից ներկայացված երաշխիքային գումարը չփոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե,

թ) Հանձնաժողովը 2016 թվականի հուլիսի 4-ից հարուցել է վարչական վարույթ՝ Լիցենզիան, Ընկերության դիմումի համաձայն, ուժը կորցրած ճանաչելու և երաշխիքային գումարը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե չփոխանցելու հարցերի ուսումնասիրության նպատակով, որի շրջանակում Ընկերությունը հայտնել է, որ իր դիրքորոշումն արդեն արտահայտել է 2016 թվականի ապրիլի 13-ի և հունիսի 6-ի գրություններով,

ժ) Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման կարգի (այսուհետ՝ Կարգ) 7-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշում է ընդունում երաշխիքն ամբողջությամբ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցելու մասին, եթե Հանձնաժողովը որոշում է ընդունել լիցենզավորված անձի լիցենզիայի գործողությունը դադարեցնելու մասին,

ժա) Կարգի 11-րդ կետի համաձայն՝ լիցենզավորված անձի ներկայացրած երաշխիքը Կարգով սահմանված դեպքերում Հայաստանի Հանրապետության պետական բյուջե չի փոխանցվում, եթե նրա կողմից լիցենզիայի պայմանների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը հետևանք է արտակարգ և անկանխելի դեպքերի ու հանգամանքների, որոնք ստեղծվել են նրա կամքից անկախ, և որոնք խոչընդոտում են նրա գործունեությանը կամ հանգեցնում նրանց ստանձնած ցանկացած պարտավորության կատարման ձգձգման կամ դադարեցման՝ հակառակ նրանց գործադրված ջանքերի՝ խուսափելու, թուլացնելու կամ վերացնելու այդ ուժերի ազդեցությունը,

ժբ) Կարգի 12-րդ կետի համաձայն՝ լիցենզավորված անձը պարտավոր է Կարգի 11-րդ կետով սահմանված դեպքերում անհապաղ տեղեկացնել Հանձնաժողովին՝ նշելով դրանց հետևանքների վերացման հնարավոր ժամկետները,

ժգ) իրականացված վարչական վարույթի արդյունքում, համակողմանիորեն ուսումնասիրելով վերը նշված իրավանորմերը, հարցին առնչվող բոլոր փաստական հանգամանքները, Հանձնաժողովի աշխատակազմը փաստել է, որ Ընկերության կողմից որպես ֆորս մաժորային ներկայացված հանգամանքները հանդիսանում են անկանխելի և արտակարգ, որոնք՝ ծագելով Ընկերությունից անկախ, հանգեցրել և հանգեցնում են վերջինիս կողմից Լիցենզիայով ստանձնած պարտավորությունների կատարման ձգձգման ու դադարեցման, խոչընդոտել և խոչընդոտում են Ընկերության գործունեության իրականացումը, հակառակ վերջինիս գործադրած ջանքերի՝ խուսափելու, թուլացնելու կամ վերացնելու այդ ուժերի ազդեցությունը: Ելնելով վերոգրյալից՝ Ընկերությունը չէր կարող ձեռնամուխ լինել Կայանի կառուցման շինարարական թույլտվություն ստանալուն և շինարարական աշխատանքների իրականացմանը: Այդ պայմաններում Ընկերությունն օբյեկտիվորեն չուներ Լիցենզիայով նախատեսված որևէ գործողություն կատարելու, մասնավորապես՝ սահմանված ժամկետում Կայանի կառուցման աշխատանքները սկսելու, իրականացնելու և ավարտին հասցնելու փաստացի հնարավորություն,

և հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ա» ենթակետը, «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը և 8-րդ մասը, Կարգի 11-րդ կետը՝ Հանձնաժողովը **որոշում** է.

1. Ուժը կորցրած ճանաչել Հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 25-ի «ՏԻԳՄԱՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Ազատ»

փոքր հիդրոէլեկտրակայանում էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №470Ա որոշումը:

2. Կայանի կառուցման աշխատանքները խոչընդոտող հանգամանքները ճանաչել որպես ֆորս մաժոր և «Արդշինինվեստբանկ» փակ բաժնետիրական ընկերությանը ազատել 2014 թվականի մարտի 7-ի №652-1967 գրությամբ Հանձնաժողովի առջև ստանձնած չորս միլիոն հարյուր հիսունյոթ հազար հինգ հարյուր դրամ երաշխիքային պարտավորությունից:

3. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումը բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ այն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
13 հուլիսի 2016թ.
ժամը 16⁰⁰